784/Բ

# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«02» փետրվարի 2016 թ. N 127-Ն

ք.Ստեփանակերտ

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ստեփանակերտ քաղաքի Լևոն Միրզոյան փողոցում գտնվող անշարժ գույքը վերահասցեավորելու համար 2016 թվականի հունվարի 27-ին գրություն է ներկայացվել «Ստեփանակերտի համայնքային ծառայություն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ա.Մեսրոպյանի կողմից:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 20-ի N381 որոշմամբ հաստատված կարգի 48-րդ և 53-րդ կետերով ու հաշվի առնելով «Ստեփանակերտի համայնքային ծառայություն» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի հունվարի 27-ի N14 գրությունը`

*ո ր ո շ ու մ եմ.*

1.Ստեփանակերտ քաղաքի Լևոն Միրզոյան փողոցում գտնվող անշարժ գույքը վերահասցեավորել` համաձայն հավելվածի:

2.Սահմանել, որ անշարժ գույքի հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ստեփանակերտի քաղաքապետին` դրա ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամսվա ընթացքում կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի (վարչական) դատարան` երկամսյա ժամկետում:

4.Սույն որոշման կատարումը հանձնարարել Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային գույքի կառավարման բաժնին:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ